ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1200 - Ա

ԾԱԿՔԱՐ, ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ԳԵՏԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԵՎ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԴՐԱ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 252-Լ որոշման 130-րդ կետը՝

1. Ստեղծել միջգերատեսչական համակարգող և փորձագիտական աշխատանքային խումբ Ծակքար, Կարճաղբյուր գետերի մաքրման և վերականգնման գործընթացին ուղղված աշխատանքների իրականացման նպատակով:

2. Հաստատել՝

1) միջգերատեսչական համակարգող խմբի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) փորձագիտական աշխատանքային խմբի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) միջգերատեսչական համակարգող և փորձագիտական աշխատանքային խմբի գործողությունների ծրագիրը՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Միջգերատեսչական համակարգող խմբի ղեկավարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա պարբերականությամբ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել տեղեկատվություն իրականացված աշխատանքների վերաբերյալ.

2) մինչև 2025 թվականի սեպտեմբերի 3-րդ տասնօրյակը Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել Ծակքար, Կարճաղբյուր գետերի մաքրման և վերականգնման աշխատանքների գնահատման հաշվետվությունը և միջոցառումների ծրագիրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

26.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ